ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-16/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308709) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-16/17 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-16/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 29.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.11.2016թ. թիվ ՄՔ/1-364-16 գրության հիման վրա, 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի

հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 23.12.2016թ. թիվ 01/04.1/4698-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ հայցադիմում է ներկայացվել դատարան (դատական գործ՝ ԵԿԴ/1188/02/15)՝ որով վիճարկվում է վկայակոչված պայմանգրի լուծման իրավաչափությունը:

Կենտրոնը Նախարարությանը տեղեկացրել է, որ Ընկերությունը 01.12.2016թ. գրությամբ միջնորդել է կասեցնել Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցը՝ մինչև վեճի առարկայի վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը վերը նշված գրությամբ խնդրել է Նախարարությանը հայտնել դիրքորոշում վերը նշված դատական գործի առկայության պայմաններում ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը ուսումնասիրելու նպատակահարմարության վերաբերյալ:

Ի պատասխան Կենտրոնի 23.12.2016թ. թիվ 01/04.1/4698-16 գրության՝ Նախարարությունը 23.01.2017թ. թիվ 03/73-1/859-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է շարունակել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 26.01.2017թ. թիվ 01/04.1/230-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին և խնդրել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու նպատակով՝ սեղմ ժամկետներում Կենտրոնին տրամադրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 և 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրերով պայմանագրերի պատճենները (այսուհետ նաև՝ պայմանագրեր), պայմանագրերի շրջանակներում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից իրականացված մատակարարումների վերաբերյալ արձանագրությունների և (կամ) հանձնման-ընդունման ակտերի, Մասնակցի կողմից

պայմանագրերով նախատեսված պարտականությունները խախտելու վերաբերյալ Պատվիրատուի կողմից կատարված գրավոր նախազգուշացումների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի և (կամ) դրանց վերաբերյալ Մասնակցի կողմից տրամադրված այլ փաստաթղթերի, ինչպես նաև Մասնակցին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 02.02.2017թ. թիվ 02/16.1/373-17 գրությամբ ներկայացրել է պայմանագրերին վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 09.02.2017թ. թիվ 01/04.1/412-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ***ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 և 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրերով պայմանագրերով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից ***24.12.2015թ.*** և ***21.03.2016թ.*** պայմանագրերի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

Սակայն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առկա չէր որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից ***(24.12.2015թ. և 21.03.2016թ.)*** հաշված մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ, Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308709) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ, քանի որ Ընկերությունը ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով ***16.08.2016թ.*** հայտ է ներկայացրել:

2. «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 01.12.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել է առարկությունները և միջնորդել է կասեցնել Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցը՝ մինչև վեճի առարկայի վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացումը:

Սակայն, Նախարարությունը 23.01.2017թ. թիվ 03/73-1/859-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է շարունակել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

3. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 26.01.2017թ. թիվ 01/04.1/230-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին և խնդրել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու նպատակով սեղմ ժամկետներում Կենտրոնին տրամադրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 և 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրերով պայմանագրերի պատճենները (այսուհետ նաև՝ պայմանագրեր), պայմանագրերի շրջանակներում «Կանժիլստրոյ»

ՍՊԸ-ի կողմից իրականացված մատակարարումների վերաբերյալ արձանագրությունների և (կամ) հանձնման-ընդունման ակտերի, Մասնակցի կողմից պայմանագրերով նախատեսված պարտականությունները խախտելու վերաբերյալ Պատվիրատուի կողմից կատարված գրավոր նախազգուշացումների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի և (կամ) դրանց վերաբերյալ Մասնակցի կողմից տրամադրված այլ փաստաթղթերի, ինչպես նաև Մասնակցին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 02.02.2017թ. թիվ 02/16.1/373-17 գրությամբ ներկայացրել է պայմանագրերին վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-16/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 29.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308709) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-16/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքվել է ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագիր:

- Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի դպրոցի վերակառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարատավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:
- Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք 16 տեսակի աշխատանքներ, որոնց կատարման վերջնաժամկետ է սահմանվել 20.06.2014թ., նույն պայմանագրին կից 02.06.2014թ. կնքված թիվ 1 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 30.09.2014թ.:
- Ըստ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 105 400 270 ՀՀ դրամ:
- 2013թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 55 771 980 ՀՀ դրամ գումարից կատարվել է 50 742 009, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***5 029 971 ՀՀ դրամի*** չափով:
- 2014թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 49 628 288 ՀՀ դրամ գումարից կատարվել է 41 363 523, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***8 264 765 ՀՀ դրամի*** չափով:
- Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետները (ներառյալ օրացույցային գրաֆիկը):
- Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը, ***24.12.2015թ.*** միակողմանի լուծել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի

իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագիր, քանի որ Ընկերությունը կողմից չեն կատարվել 2013-2014թթ. համար նախատեսված շինաշխատանքներ՝ շուրջ 13 294 736 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքվել է ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագիր:

- Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարատավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:
- Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք 3 տեսակի աշխատանքներ, որոնց կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.06.2015թ:
- Ըստ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 529 286 882 ՀՀ դրամ:
- 2014թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 5 060 480 ՀՀ դրամ գումարից կատարվել է 1 157 993, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***3 902 487 ՀՀ դրամի*** չափով:
- 2015թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 31 593 420 ՀՀ դրամ գումարից կատարվել է 18 651 604, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***12 941 816 ՀՀ դրամի*** չափով:
- Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետները (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

• Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը, ***21.03.2016թ.*** միակողմանի լուծել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագիրը, քանի որ Ընկերությունը կողմից չեն կատարվել 2014-2015թթ. համար նախատեսված շինաշխատանքներ՝ շուրջ 16 844 303 ՀՀ դրամի չափով:

3. Կենտրոնը 09.02.2017թ. թիվ 01/04.1/412-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ***ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 և 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրերով պայմանագրերով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից ***24.12.2015թ.*** և ***21.03.2016թ.*** պայմանագրերի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

4. Սակայն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առկա չէր որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից ***(24.12.2015թ. և 21.03.2016թ.)*** հաշված մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ, Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308709) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

5. ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 527 001 ՀՀ դրամի չափով տուժանք և ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում

պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 2 646 434 ՀՀ դրամի չափով տուժանք, սակայն Ընկերության կողմից այդ գումարները չեն վճարվել:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ, քանի որ Ընկերությունը ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով ***16.08.2016թ.*** հայտ է ներկայացրել:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.11.2016թ. թիվ 03/73-1/25638-16, 23.01.2017թ. թիվ 03/73-1/859-17 և 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությունները, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 11.11.2016թ. թիվ ՄՔ/1-364-16 գրությունը և կից փաստաթղթերը, «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 01.12.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն***, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

1.ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքվել է ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի դպրոցի վերակառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարատավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք 16 տեսակի աշխատանքներ, որոնց կատարման վերջնաժամկետ է սահմանվել 20.06.2014թ., նույն պայմանագրին կից 02.06.2014թ. կնքված թիվ 1 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 30.09.2014թ.:

Ըստ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 105 400 270 ՀՀ դրամ:

2013թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 55 771 980 ՀՀ դրամ գումարից կատարվել է 50 742 009, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***5 029 971 ՀՀ դրամի*** չափով:

2014թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 49 628 288 ՀՀ դրամ գումարից կատարվել է 41 363 523, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***8 264 765 ՀՀ դրամի*** չափով:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը խախտել է նույն

պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետները (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը, ***24.12.2015թ.*** միակողմանի լուծել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագիր, քանի որ Ընկերությունը կողմից չեն կատարվել 2013-2014թթ. համար նախատեսված շինաշխատանքներ՝ շուրջ 13 294 736 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, Ընկերության կողմից ԲԸՀԱՇՁԲ-13/3 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

2. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքվել է ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարատավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք 3 տեսակի աշխատանքներ, որոնց կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.06.2015թ:

Ըստ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 529 286 882 ՀՀ դրամ:

2014թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 5 060 480 ՀՀ դրամ գումարից կատարվել է 1 157 993, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***3 902 487 ՀՀ դրամի*** չափով:

2015թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 31 593 420 ՀՀ դրամ գումարից կատարվել է 18 651 604, իսկ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել ***12 941 816 ՀՀ դրամի*** չափով:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետները (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը, ***21.03.2016թ.*** միակողմանի լուծել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագիրը, քանի որ Ընկերությունը կողմից չեն կատարվել 2014-2015թթ. համար նախատեսված շինաշխատանքներ՝ շուրջ 16 844 303 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, Ընկերության կողմից ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ ***Ընկերության կողմից ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի միջև 04.12.2013թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-13/3 և 19.12.2014թ. կնքված ԲԸՀԱՇՁԲ-14/8-6 ծածկագրերով պայմանագրերով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից ***24.12.2015թ.*** և ***21.03.2016թ.*** պայմանագրերի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակ-

ցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u>** ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն ***16.08.2016թ.*** հայտ է ներկայացրել:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***24.12.2015թ.*** և ***21.03.2016թ.*** թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանագրային պարտավորության մեկից ավելի խախտում, որից հետո ***16.08.2016թ.*** հայտ է ներկայացրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***3 տարի ժամկետով,*** *եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը ***չեն վերականգնվել*** *մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:*

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրերով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը, որից հետո Ընկերությունը ***16.08.2016թ.*** հայտ է ներկայացրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/7» ծածկագրով բանակցային ընթացակարգին և միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծման հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից սույն որոշում ընդունվելը Ընկերության կողմից չի վերականգնվել և ուստի Խորհուրդը գտնում է, որ առկա են հիմքեր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2017թ. թիվ 03/73-1/3157-17 գրությամբ ներկայացված «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308709) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամ՝ **Հրաչյա Ավետիսյան**

Անդամ՝ **Տիգրան Գալստյան**